պարտական վճարել։ Բացի այդ՝ հպատակները պարտաւոր են նաև խանի ընդարձակ հողերը վարել, ցանել, ջրել, արդիւնքը տեղափոխել, անասնոց համար գոմեր շինել, անասունները պահպանել, որոնք սատկելու պակասելու իրաւունք չունին՝ նոքա միայն պիտի ծնեն և աւելանան. օրինակ նորա ոչխարները ու կովերը ամեն տարի անպատճառ պիտի տան մի մի գառն, մի մի յորթ և նշանակեալ իւղը, պանիրը և բուրդը։ Հակառակ դէպքում գիւղացին պատասխանատու է։

Հողի սեպհական իրաւունքին երկու տէրեր կան, կառավարութիւնը և խաները։ Ամեն մի գիւղացին տասին երկու տասանորդ է վճարում արմտիքից և ընտեղեններից, բացի բամբակը, որ երեքից մեկն են վճարում և ի վերայ այսը ամենայնի գիւղացին իրաւունք չունի իւր արմտիքը ծախելու։ Եթէ արտասահմանում լաւ գին է հանում ցորեանը, բուրդը կամ բամբակը, խանը իւր կամեցած գնովը առնում է գիւղացուց, որը պարտական է իւր անասուններովը տեղափոխել արդիւնաբերութիւնքը մինչև խանից նշանակեալ տեղը։

Սահմանակից քաղաքներում, ինչպէս Նախիջևան, Երևան, Շուշի, Գանձակ և այլ ամեն տարի լցվում են պարսկաստանցի մշակների մեծ բազմութիւն, որոնք աղքատութեան յետին